Կարծիք

Ռուզաննա Նորիկի Սայիյանի «Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկությունները» թեկնածուական ատենախոսության մասին

Հովհաննես Գրիգորյանը վերջին տասնամյակների հայ լավագույն բանաստեղծներից մեկն է՝ իր ուրույն մտածողությամբ, ոճով, պատկերավորման համակարգով, գրական ընթացքի վրա թողած ազդեցությամբ, հայ բանաստեղծության թարմացմանն ուղղված ջանքով:

Նրա պոեզիան իր կենդանության օրոք արդեն իսկ ուներ համակարգային երևում և հայցում էր մանրակրկիտ և լուրջ հետազոտություն: Առավել ևս այսօր, երբ տաղանդավոր բանաստեղծն այլևս մեզ հետ չէ, իսկ նրա բանաստեղծական հետագիծը անվիճարկելիորեն կարելի է բնութագրել վերջին տասնամյակների մեր պոեզիայի հանգրվանային արժեքներից մեկը, Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի գիտական հետազոտությունը չափազանց կարևոր է: Ընդ որում՝ ոչ միայն ինքնին, փակ համակարգի մեջ, այլև հայ բանաստեղծության վերջին տասնամյակների զարգացումների տրամաբանությունը հասկանալու համար:

Ռուզաննա Նորիկի Սայիյանի թեկնածուական ատենախոսության վերնագրում ընդգծված խնդրադրությունը՝ «Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկությունները», ինքնին ենթադրում է հենց նմանատիպ հետազոտություն, քանզի Հովհաննես Գրիգորյանի պոետական ջանքը և դրա արդյունքում ձևավորված առանձնահատկությունները ոչ միայն անհատական ստեղծագործական տարածության ընդարձակմանն են միտված, այլև մի կողմից՝ պայմանավորված են ընդհանուր գրաբանական դաշտի յուրահատկություններով, մյուս կողմից՝ հենց իրենք են պայմանավորում ու հաճախ թելադրում այդ յուրահատկությունները:

Ատենախոսությունը բաղկացած է Ներածությունից և երեք գլուխներից՝ «1960 - ԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՈՒՂԻՆ», «ՀԵԳՆԱՆՔԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ», որն իր հերթին երկու ենթագլուխ ունի՝ «Հովհ. Գրիգորյանի մինչանկախության շրջանի պոեզիան», «Հովհ. Գրիգորյանի հետանկախության շրջանի պոեզիան» և «ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻ ԲԱՆԱՐՎԵՍՏԸ»:

Ատենախոսության Ներածությունում Ռուզաննա Սայիյանը կարճ նախաբանային խոսքից հետո անցնում է թեմայի արդիականությանը, ընդհանուր գծերով բնութագրում Հովհաննես Գրիգորյանի պոեզիան, ապա ներկայացնում ատենախոսության մեջ արծարծվելիք խնդիրները: Պետք է նշել, որ ընդհանուր առմամբ ատենախոսն ընտրել է ճիշտ թիրախներ, թեպետ, առաջ անցնելով ասենք, որ ատենախոսության կառուցվածքը և թիրախների՝ որպես հարցադրումների ձևակերպման պրոցեսը փոքր-ինչ տարտղնված է, և երևան է բերում որոշակի անհամաչափություններ:

Մասնավորապես՝ ատենախոսության առաջին գլուխը՝ «1960-ԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՈՒՂԻՆ», որտեղ բավական հանգամանալից, փաստառատ վկայակոչումներով ներկայացվում է 1960-ականների ասպարեզ մտած բանաստեղծների անցած դժվար ու բանավեճերով ու մերժումներով հարուստ ուղին, ավելի ճիշտ կլիներ՝ ոչ թե ներկայացնել որպես առանձին գլուխ, այլ դարձնել Ներածության նյութ, իսկ վերլուծական հատվածների մեծ մասը այսպես ասած՝ սփռել ատենախոսության մյուս գլուխներում՝ ըստ հարկի: Այս կերպ ստացվում է, որ կատարված մեծ աշխատանքը, շահեկան վերլուծությունները այս գլխում, այնուամենայնիվ, դեռ այսպես ասած՝ նախաբանային տրամադրվածություն են ստեղծում:

Մյուս կողմից՝ այս կերպ առավել առարկայանում է Հովհաննես Գրիգորյանի և նրա սերնդակիցների բանաստեղծության պատկերը առավելապես 1960-70-ական թվականների գրական ընթացքի պարագծում, այն դեպքում, երբ անկախության շրջանի նույն սերնդի հետագիծը եկավ վկայելու, որ եթե նախկինում շատ բան կար նրանց կապող, ապա հիմա շատ բան կա նրանց տարբերող: Եվ ահա այստեղ է, որ

պետք է երևար Հովհաննես Գրիգորյանի բանաստեղծության հիմնական առանձնահատկությունը:

Բարեբախտաբար, այս խնդիրն ատենախոսը այսպես ասած՝ մասնավորեցնում է ատենախոսության երկրորդ գլխում, ու հատկապես՝ դրա երկու ենթագլուխների բաժանումներում՝ ըստ ամենայնի փորձելով Հովհաննես Գրիգորյանի պոեզիան ենթարկել շրջափուլային բաժանումների: Եթե մի կողմ թողնենք՝ այդպես էլ չհիմնավորվող շրջափուլային բաժանումը (միայն Հայաստանի անկախության փաստը հիմնավորում չէ շրջափուլային հարցերում)՝ «Հովհաննես Գրիգորյանի պոեզիան արժե բաժանել մինչանկախության և հետանկախության շրջանների» (էջ 108) պարզապես ցանկություն արտահայտող բնորոշմամբ, ապա տարակուսելին այստեղ գլխի ընդհանուր վերնագիրն է՝ «ՀԵԳՆԱՆՔԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ»:

Անշուշտ, վիճարկելի չէ, որ հեգնանքը, էլ ավելի կոնկրետ՝ երևույթների պարոդիկ կերպընկալումը, Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի հիմնական էատարրերից է: Սակայն հեգնանքը դիտարկել որպես հիմնական առանձնահատկություն, և բանաստեղծի ստեղծագործական շրջափուլերը վերլուծել այդ առանձնահատկության գերակայությամբ, կարծում ենք, այդքան էլ ճիշտ չէ: Երկրորդ գլխի ընդհանուր վերնագիրը վիճարկելի է թվում նաև այն առումով, որ ուղղահայացում վերլուծվում են շատուշատ, ընդ որում՝ շատ կարևոր այլ հարցեր, ընդ որում՝ ոչ հեգնանքի գերակայությամբ:

Այնուամենայնիվ, թե՛ վերլուծականության տեսանկյունից, թե՛ Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկությունների վերհանման առումով ատենախոսության երկրորդ գլուխը առանձանանում է: Այստեղ շրջափուլային իրողությունների շեշտադրմամբ անդրադարձ է կատարվում Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի և՛ թեմատիկ-ոճական առանձնահատկություններին, թե՛ գեղագիտական հարցադրումներին, հայրեներգություն, սիրերգություն, հայրերգություն

մասնավորություններին, ժամանակի ընկալմանն ու մեկնաբանմանը, և այլն, կատարվում են դիպուկ ընդհանրացումներ:

Հմտորեն և ճիշտ անցումներով են վերլուծվում մանավանդ Հովհաննես Գրիգորյանի չափազանց ինքնատիպ կառուցվածք ունեցող ժողովածուները: Ատենախոսը կարողացել է որսալ ու մեկնաբանել բանաստեղծի կառուցվածքային խաղարկումները, որոնք ժողովածուներում տարբեր համատեքստեր են ստեղծում, և տարբեր թեմաներ տարբեր շարքերում հնչեցնում նորովի, երբեմն՝ նույնիսկ չափազանց տարբեր:

Տարակուսելին, կրկնում եմ, այդ ամենը հենց հեգնանքի գերակայությամբ դիտարկելն է, որը գալիս է ըստ էության զանցելու Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի առնվազն ևս մեկ կարևոր հատկանիշ՝ ողբերգականի գեղագիտությունը, որն էատարրային է նրա դեպքում: Թեպետ, արդար լինելու համար պետք է փաստենք, որ հեգնանքը և նրա բովանդակային, կառուցվածքային, ասելիքային և այլ յուրահատկությունները ընդհանրապես և ի մասնավորի Հովհաննես Գրիգորյանի պոեզիայում ատենախոսը շատ լավ է ներկայացրել՝ թե՛ տեսական պատրաստվածությունն է բավարար, թե՛ ըստ դրա վերլուծականության մակարդակն ու առանձնացումները:

«ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻ ԲԱՆԱՐՎԵՍՏԸ» վերնագրով երրորդ գլուխը ինքնին խոստումնալից է: Այն առումով, որ բանարվեստային յուրահատկություններն են ամենից հաճախ բացապարզում որևէ բանաստեղծի կամ արձակագրի ստեղծագործության առանձնահատկությունները: Այս գլխում ատենախոսն ընտրել է մի շարք բանարվեստային կարևոր մասնավորություններ, և դրանք ներկայացրել/վերլուծել է ըստ հարկի: Իհարկե, կարելի էր շատ ավելին սպասել, մանավանդ որ՝ բանարվեստային որոշ խնդիրների շուրջ մի փոքր ավելի մեծ ծավալում կա, քան անհրաժեշտ է, իսկ որոշ հարցեր քննաբանված են հպանցիկ:

Ամփոփենք: Ռուզաննա Նորիկի Սայիյանի «Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկությունները» թեկնածուական ատենախոսությունը,

չնայած կառուցվածքային ու խնդրադրույթային որոշ անհամաչափությունների, գրված է նյութի իմացությամբ, համակողմանի ուսումնասիրությամբ, պատշաճ շարադրանքով, Հովհաննես Գրիգորյանի բանաստեղծության հանդեպ սիրով ու հստակ արժևորմամբ:

Ընդհանուր առմամբ, կատարվել է գնահատելի աշխատանք: Ուստի միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող 003 գիտական խորհրդի առջև Ռուզաննա Սայիյանին շնորհել իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Արքմենիկ Նիկողոսյան

Բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող